

13867



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 24 » 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 288 - 24

Նախաձեռնող՝

«ԲԵՍԹ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ք. Երևան, Ռոստոմյան/9 Էրեբունի

Գործունեությունը՝

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի  
հյուսիս-արևելյան տեղամասի արդյունահանման  
աշխատանքներ

Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 288 - 24

«24» յունիստի 2024թ.

**Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԲԵՍԹ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, Զորավան բնակավայր

**Ներածական մաս.** «ԲԵՍԹ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ ընդերքօգտագործող կազմակերպությունը և «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ նախագծող ընկերությունը նախատեսում է իրականացնել Կոտայքի մարզի Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զորավան բնակավայրում՝ բնակավայրից 3.2 կմ հեռավորության վրա, Եղվարդ քաղաքից 7.4 կմ դեպի հյուսիս-արևելք, Նոր Գեղի բնակավայրից 1.25 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Լեռնագրական տեսակետից հանքավայրի շրջանը գրավում է Եղվարդի հրաբխային սարահարթը և Արա լեռան հարավային լանջերը:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին միոցենի և վերին պլիոցենի ապարները, վերին չորրորդական-ժամանակակից նստվածքները:

Տեղամասի ռելիեֆը բաժանվում է երկու՝ արևմտյան համեմատաբար հարթ և արևելյան՝ անհարթ, առանձին բլրածև բարձունքներով հատվածների, գտնվում է 1443-ից 1464 մ բացարձակ բարձրությունների վրա:

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°20'09.24" - հյուսիսային լայնության, 44°33'57.53" - արևելյան երկայնության:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ հանքավայրի և հարակից տարածքներում կարստեր, սողանքներ և այլ բնույթի երևույթներ չկան: Հայցվող տեղամասում բացակայում են բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակները, անտառային ծած-



կույթը, գետային ցանցը, գրունտային ջրերը, բնական ու պատմամշակութային հուշարձանները:

Անմիջապես բացահանքի տարածք թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով՝ ներծծվելով ճեղքերի միջով:

Հանքավայրում անդեզիտաբազալտները ծածկված են մինչև 3 մ հզորությամբ դեյուվիալ ավազակավային առաջացումներով: Ծածկող ապարների հզորությունը տատանվում է 0.5-ից 11.5 մ սահմաններում՝ կազմելով միջինը 5.43 մ: Անդեզիտաբազալտները բնութագրվում են գործնականում համասեռ քիմիական կազմով, ապարի հիմնական զանգվածը գրեթե բյուրեղային է՝ կազմված հանքային և գունավոր միներալների միկրոհատիկներից:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի պաշարները հաստատելու մասին» 26.03.2024թ. N 542-Ա հրամանով, կազմակերպել «ԽԻԾ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԳՕՍ-երի տեխնիկական պահանջներին համապատասխանող վերջնարտադրանքների արտադրություն:

Հայցվող տարածքում լցակույտեր, հանված, պահեստավորված հողաբուսական շերտ և ենթակառուցվածքներ չկան:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի ծայրակետային կոորդինատները՝ ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի հետևյալն են.

X	Y	X	Y
1. 4466956.4	8462782.6	6. 4467008.7	8463461.7
2. 4467209.1	8462872.6	7. 4466859.1	8463410.0
3. 4467087.2	8463072.9	8. 4466929.7	8463149.1
4. 4467186.4	8463223.1	9. 4466938.8	8462969.2
5. 4467111.6	8463346.9		

Ելնելով Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական բարենպաստ պայմաններից տեղամասի մշակումը նախատեսվում է բաց եղանակով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 626.0 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 269.0 մ,
- մշակվող անդեզիտաբազալտների հաստաշերտի միջին հզորությունը՝ 47.8 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 65 մ,
- բացահանքի նվազագույն խորությունը՝ մոտ 50 մ,
- բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 13.55 հա,
- հանքաստիճանի բարձրությունը բացահանքի վերջնական դիրքում՝ 5 մ,
- հանքաստիճանի թեքությունը՝ 85°,
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 1.5 մ,
- բացահանքի կողի առավելագույն թեքությունը՝ 69°:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 20 տարի:

Օգտակար հանածոյի պաշարները Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասում կազմում են 6487.3 հազ. մ<sup>3</sup>, կորզվող պաշարները՝ 5345.4 հազ.մ<sup>3</sup>, տարեկան մարվող պաշարները՝ 324.0 հազ.մ<sup>3</sup>, տարեկան արտադրողականությունը՝ 267.0 հազ. մ<sup>3</sup>/տարի, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ մակաբացման ապարների՝ 35580մ<sup>3</sup>: Մակաբացման ապարների տարեկան ծավալը կազմում է 35.6 հազմ<sup>3</sup>:



Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել խորացող մշակման համակարգով աշխատանքային աստիճանի 5 մ բարձրությամբ և արտաքին լցակույտառաջացմամբ:

Անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի շահագործման նպատակով բացահանքային դաշտի բացումը նախատեսվում է իրականացնել 1465-1450 մ նիշ ունեցող հորիզոնները կիսախրամներով, իսկ 1445-1400 մ նիշ ունեցողները՝ ներքին խրամներով:

Հանութային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական կամ երկայնական (կախված ավտոճանապարհի և աշխատանքային աստիճանի միմյանց նկատմամբ փոխադարձ դասավորությունից) մեկկողանի մշակման համակարգով:

Կախված լեռնային զանգվածի ամրությունից ու ճեղքավորությունից՝ օգտակար հանածոյի պոկումը անդեզիտաբազալտային զանգվածից նախատեսվում է իրականացնել երկու եղանակով՝ մեխանիկական՝ էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճի միջոցով, որն իր մեջ ներառում է՝ մենաքարի անջատում զանգվածից, մենաքարի հեռացում հանքախորշից, մենաքարի մասնատում և հորատապայթեցման եղանակով՝ հորատանցքային լիցքերի պայթեցմամբ, որը կիրառվելու է լեռնային զանգվածի համեմատաբար մեծ ամրության և քիչ ճեղքավորության դեպքում: Հորատապայթեցման աշխատանքների կազմակերպումն ու աշխատանքների կատարումն իրականացվելու է հատուկ մասնագիտացված կազմակերպության կողմից:

Օգտակար հանածոյի անդեզիտաբազալտային զանգվածից մեխանիկական եղանակով արդյունահանման ընթացում փխրեցված անդեզիտաբազալտները CATERPILLER մակնիշի բուլդոզերով կտեղափոխվեն և կկուտակվեն աշխատանքային հրապարակում, այնուհետև DOOSAN DX 360LCA-7M միաշերտի էքսկավատորի միջոցով կբարձվեն և SHACMAN X3000 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով:

Օգտակար հանածոյի անդեզիտաբազալտային զանգվածից հորատապայթեցման եղանակով արդյունահանման դեպքում փխրեցված անդեզիտաբազալտները անմիջապես հանքախորշից DOOSAN DX 360LCA-7M միաշերտի էքսկավատորի միջոցով կբարձվեն և SHACMAN X3000 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով կտեղափոխվեն խճի և ավազի ստացման արտադրամաս:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի 711600 մ<sup>3</sup> ծավալով մակաբացման ապարները ներկայացված են հողաբուսական շերտով և դեյուվիալ ավազակավային առաջացումներով, խարամացած անդեզիտաբազալտների բեկորներով և մուգ մոխրագույն, հողմահարված, խարամացած անդեզիտաբազալտներով, որոնց հեռացումը նախատեսվում է իրականացնել CATERPILLER մակնիշի բուլդոզերով:

Մակաբացման ապարները հանքավայրի շահագործման ամբողջ ընթացքում, նախատեսվում է տեղավորել բացահանքից դեպի արևմուտք ձևավորվելիք երկու առանձին ժամանակավոր արտաքին լցակույտ, որոնցից մեկը կունենա համեմատաբար մեծ տարողունակություն և նախատեսված կլինի խարամացած անդեզիտաբազալտների բեկորներով և մուգ մոխրագույն, հողմահարված մակաբացման ապարների, իսկ մյուսը՝ հողաբուսական շերտի տեղավորման համար: Մակաբացման ապարների համար նախատեսված ժամանակավոր արտաքին լցակույտն վերջնական դիրքում կունենա մեկ հարկ՝ 0-15 մ (միջինը՝ 7.5 մ) բարձրությամբ, ապարների ծավալը՝ կկազմի 884572 մ<sup>3</sup>, մակերեսը՝ 3.5 հա: Հողաբուսական շերտի համար նախատեսված ժամանակավոր արտաքին լցակույտն վերջնական դիրքում կունենա մեկ հարկ՝ 0-10 մ (միջինը՝ 5 մ) բարձրությամբ, ապարների ծավալը կկազմի 40508 մ<sup>3</sup>, իսկ զբաղեցրած մակերեսը՝ 0.9 հա:

Հանքավայրի շահագործման ընթացքում կորուստները բնամասերի տեսքով բացահանքի վերջնական եզրագծերի սահմաններում (բացահանքի կողերում) կկազմեն 17.6 %:

Բացահանք տեխնիկական ջրով մատակարարումը իրականացվում է արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանա-



պարհների և ժամանակավոր լցակույտերի ջրցանման նպատակով: Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսվում է կազմակերպել KamA3 43118 մակնիշի ջրցան մեքենայով, խմելու ջրի մատակարարումը՝ BL-1.2 մակնիշի ջրի ցիստեռնով: Տեխնիկական և խմելու ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել Ջորավան կամ Նոր Գեղի բնակավայրերից:

Կենցաղային կեղտաջրերը լցվելու է բետոնե լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար իրականացվելու է տեղափոխում:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա: Հիմնական ազդեցությունները կդիտվեն փոշեառաջացման օջախների և լանդշաֆտի փոփոխության տեսքով:

Հանքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր կհանդիսանան՝ տրանսպորտը և մաքրահանութային աշխատանքները, օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը կլինեն՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային աշխատանքներ, լցակույտ), ազոտի ու ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ):

Գնահատման հաշվետվությունում իրականացվել է «Эко Центр» համակարգչային ծրագրով արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, որի արդյունքների համաձայն՝ արտանետվող աղտոտիչների կոնցենտրացիաները չեն գերազանցի սահմանային թույլատրելի խտությունները:

Օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանման ժամանակ բացահանքի, մակաբացման ապարների լցակույտերի, արտադրական հրապարակների հողային ռեսուրսների վրա կլինի ուղղակի ազդեցություն, ինչը կդրսևորվի տարածքում տեխնածին լանդշաֆտի ձևավորմամբ, արտադրական հրապարակի նավթամթերքներով հնարավոր աղտոտմամբ և անուղղակի ազդեցություն՝ հողի մակերևույթին մթնոլորտ արտանետվող փոշու և աղտոտիչ նյութերի նստեցմամբ:

Հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հանքի շահագործման աշխատանքների ընթացքում կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝ օգտակար հանածոյի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, թրթռումները, փոշին, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները և այլն, բուսական և կենդանական աշխարհի վրա նախատեսվող աշխատանքները կունենան նվազագույն ազդեցությունը:

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ բացահանքում իրականացվող ապարների փխրեցման և բարձման, լցակույտում ապարների բեռնաթափման և հարթեցման աշխատանքները, ավտոտրանսպորտի շարժը: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը, գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ

ցածր՝ 39 դԲԱ: Հանքավայրի արդյունահանման գործընթացների հետ կապված կառաջանա առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, ինչը ևս կլինի սահմանային թույլատրելի նորմերում:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի շահա-



գործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասը կկազմի 367933.31 հազ. ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հողային, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա վնասակար ազդեցության մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

- տեխնիկատրանսպորտային միջոցների սարքին վիճակով շահագործում՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը,
- մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված տարածքներում,
- ինքնաթափի վրա կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, համապատասխան թեքության ապահովում, ինչն էլ կապահովի թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- հողի աղտոտումը կանխելու նպատակով՝ աղբամանների տեղադրում,
- փոշենստեցման նպատակով՝ փոշեառաջացման օջախների (բացահանք, աշխատանքային հրապարակներ, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- փոշենստեցման համար այնպիսի ծավալներով ջրցանի իրականացում, որը չի առաջացնի արտահոսք,
- արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերի կուտակում բետոնապատ անթափանց հորում և պարբերաբար հեռացում հատուկ ծառայության ուժերով,
- աղմուկի նվազեցման նպատակով մեքենաների սարքավորում ձայնախլացուցիչներով և այլն:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում են նաև թափոնների ծավալների, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազում, անհողմություն, մառախուղի առաջացում), հնարավոր արտակարգ իրավիճակների, հակավթարային, աղմուկի և թրթռման վերահսկողության, կառավարման վայրի բնության պահպանության և հսկողության միջոցառումների իրականացում, որոնք նկարագրված են հաշվետվությունում:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան կիրականացվի արդյունահանման աշխատանքների ավարտից հետո, որի ժամանակ նախատեսվում է CATERPILLER մակնիշի բուլդոզերով արտաքին ժամանակավոր լցակույտում տեղադրված մակաբացման ապարների և հողաբուսական շերտի փոշում բացահանքի հատակին: Արտաքին ժամանակավոր լցակույտում տեղադրված մակաբացման ապարները և հողաբուսական շերտը կտեղափոխվեն բացահանքի մշակված տարածություն: Հարթեցման աշխատանք ները կատարվելու է բացահանքի հատակի, արտադրական հրապարակի և արտաքին ժամանակավոր լցակույտների ողջ 18.2 հա մակերեսով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլն իրականացվելու է օգտակար հանածոյի ամբողջ պաշարների արդյունահանումից հետո, հանքի փակման փուլում: Կենսաբանական փուլի ժամանակ նախատեսվում է տեխնիկական ռեկուլտիվացիայի ենթարկված տարածքում իրականացնել երեքնուկի ցանքս:

Տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կկազմի 29644.79 հազ. ՀՀ դրամ:

Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում կառաջանան հետևյալ թափոնոտեսակները՝ սպառողական հատկությունները կորցրած կապուց կուտակիչներ, բանեցված շարժիչների յուղեր, չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ, հալոզեմներ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր, յուղումած լարեր, լիդրոն մակաբացման ապարներ, կազմակերպությունների կենցաղային տարածքներից անաչա



չտեսակավորված կենցաղային աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) և այլն: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածակագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետումների, աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են՝ ածխածնի օքսիդի համար՝ 5 մլգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդի համար՝ 0.085 մլգ/մ<sup>3</sup>, մրի համար՝ 0.15 մլգ/մ<sup>3</sup>,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
3. հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ անգամ հաճախականությամբ,
4. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ ըստ անհրաժեշտության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացված են նաև մշտադիտարկումների օբյեկտները, վայրերը, տեսակները, ցուցանիշները և նվազագույն հաճախականությունները:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան 300 հազ. ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** Կոտայքի մարզի Նորագյուղի անդեգիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Ջորավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում՝ հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպա-



նական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Պայթեցման աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 2008թ. մարտի 6-ի «Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին» N 291-Ն որոշման պահանջով:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջներով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:

4. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջարդիչ կայանքի տեղադրման դեպքում գործունեության նախագծման փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ


«ԲԵՍԹ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նախիբյան